25. ՍԱԼՎԻ ԱՂԱՋԻ

Կ'էղի թակավոր մի, իրեք հատ ախչիկ: էտ իրեք ախչիկ լե անտանել ին: Բազրկամ' էկավ, ընցավ:

էն մեկ ախչիկ ըսեց. - էս բազրկան ընձի տանի ուր տղին, իմալ խալիչե մի գործեմ, աշխար չէղնի:

էն մեկ ախչիկ ըսեց. - Օր ընձի տանի, էմալ բան պիտ գործածեմ, օր արարիչ աշխըրքի մեջ չ'ըլնի:

է մեկ ախչիկն էլ ըսեց. - Ես նա խալ գիտեմ, նա խալիչա: Օր ընձի տանի, ես պիտի ջուխտ տղա բերեմ ախչկե ծամեր օսկի ու ճկուք, տղի բրչամ օսկի ու ճկուք:

Բազրկան իրեք ախչիկն էլ առավ տարավ: էն էրկուս սուք էլան, էն մեկ օղորք էլավ: Ին ամիս, ին օր օր թմավ, պառկավ, բերեց ախչիկ մի օսկեծամ, օսկեճկուք, տղեն էլ՝ օսկի բրչամ ու օսկեճկուք:

Ջոջ քուր էլավ գէտ էրկու տղեն տարավ թալեց Ջեռնկա սար, էրկու շան լակոտ փաթթեց դրեց քուրոչ խեչ: էդ ախչիկ օր էրկու տղա բերեց՝ բազրկան լսեց, ուրախցավ, օր լսեց՝ էրկու շան լակոտ է բերեր՝ տռամավ:

Ըսեց. - Ջանըմ, հիսուն օր պառկի շան լակոտ բերե, չէ էնի շուն է, օր շան լակոտ կը բերե:

Գոմեշ մի զարկեց գետին, մորթեց, տիկ հանեց զէտ գոմեշ, բերեց կնիկ փաթթեց մեջ, դրեց դռան հետև էղավ թուլըթլաման, որ գեր թքուր վըր կաշուն, նոր էրթեր: Մեկ քանի մի տարի մնաց: Բազրկանպաշին էլավ ավջի, գնաց սարի քլոխ: Տեսավ տղեն՝ էնտեղեն տղե մի էկավ:

Ըսեց. - Բազրկանպաշի՛, էրթանք մըր տուն զիաֆաթ:

էլավ, առավ, տարավ. բազրկանպաշին տեսավ ախչիկ մի նստուկ հոլլըկի տակ:

- Օղուլ ջան, - ըսեց, - նա ձգի հայր կա, նա մայր:

- Հա, - ըսեց, - մզի նա պապ կա, նա մամ:

Ըսեց. - Վերու էծ:

Հիրիկուն բազրկանպաշին էկավ տուն, խըսա էնեց: Ըսեց. - Սարը գացի, տղե մի ընձի տարավ զիաֆաթ, աղջիկ մ'էլ կեր հոնի, իմալ իմ սիրտ վըր ընձի ցավաց, ես գիցա իմ ջիգրեն են:

էլավ ջոջ քուր միջնեկ քուրոջ ըսեց. - Լաո՛, հո՞րին դու մինակ նըստեր ես հոդի: Քու ախբեր ճամբա Սալվի աղաջու հետև: Սալվի աղաջ կա, ծառ կը զանի, ծառ կը խաղա. թուփ կը զանի՝ թուփ կը խաղա, քար կը զանի՝ քար կը խաղա, Սալվի աղաջու հետև:

էլավ ըսեց. - Ի՞նչպես կէրթա իմ ախպեր:

Ըսեց. - Դու պառկի, հիվընդցի, օր կիգա՝ ճամփե:

Ախբերն էկավ, քուրն ըսեց. - Ախբե՛ր, գնա ընձի Սալվի աղաջ բեր, օր իմ բեհն չը բռվի:

Ախբերն էլավ գնաց: Տեսավ օր էմալ է սաստիկ, սաստիկ գետի մը ռաստ էկավ:

Գնաց տեսավ օր, յոթ ճեմբաբաժին ախչիկ մի կայներ է, ծծեր թալեր է հառջևանց, էջեր է պառեկի կես:

էտ տղեն գնաց ծծի պտուկ առավ ուրին բերան, ըսեց. - Ի՛մ մամ, ի՛մ քուր, ճամփա տուր ընցնիմ:

Ըսեց. - Ի՞նչ ըսիմ, դու ընձի ըրիր մամ ու քուր, թե չէ քու ջոջ փերթ քու անգաճ կը թողնենք: Գնա, էտա խալիվոր կը տեսնի՞ս, իմ ջոջ ախբերն է: Սալվու աղաջի դարդեն էմալ հեռոտ է, տըսնըխինգ տարեկան է. քառ-սունխինգ տարեկնի պես ըխթիյարցեր է, էմալ մի կա՛յլոն կը քաշե, բոց կ'էլնի՝ մեկ գետինքն է, մեկ երկինքն է: Գնա, էդի ճամբեն ցույց կիտա:

Գնաց ըսեց. - Ափո, բարև քե:

Ըսեց. - Հու՞ր կէրթաս:

Ըսեց. - Կէրթամ Սալվի աղաջի հետև:

Ըսեց. - Օղու՛լ, կը տեսնիս էդի իրեք դարգախ, բաց է: էտա քառսուն տարի բաց է: Գնա դիր, էնա քառսուն էլա փակ է, գնա բաց: Գել կայներ է, հառեջ խոտ է, խոչ կայներ է՝ հառեջ միս է: Միս վերու դիր գելու հառեջ, խոտ՝ խոչուն, քզի ճամբախ կիտան, կէրթաս:

- Բաց դա՛ռգա՛ն, - ըսեց, - ռհաթա, դրուկի, բացա:

Գնաց էտ արնջուր խմեց, ըսեց. - էդ իմա՞լ զուլալ ջուր:

Արնջուր էր՝ զուլլավ, էղավ հիստակ ջուր:

Գնաց առտի մի ռաստ էկավ, էտ առտ էմալ տատաշ է: Ըսեց. - Վարթ ու ռհան է:

Ճամբախ տվեց, էղավ վարթ ու ռհան:

Էտ առտ էղավ զրուց, ըսեց. - Օղո՛ւլ, ընձի կընցնես՝ կէրթաս Սալվի աղաջին կըսես՝ կէղիս քար, ափսոս ես, կնկա խափուկ ես, ետ դարձի, դու կէղիս քար:

Ըսեց. - Օր կէրթաս, կըսես՝ Սալվի աղաջ:

Սալվի աղաջ կըսե. - Քար ես, քար դառնաս: Չվախենաս, քար կը թալե քու չոքեր: Կը դանչես՝ Սալվի աղաջի:

Կըսե. - Քար ես, քար դառնաս: Չվախենաս՝ քար կը թալե քու ծծեր:

Կըսե. - Սալվի աղաջի:

Կըսե. - «Քար ես, քար դառնաս»: Քար կը թալե քու չոքու գլուխ. չվախենաս:

Սալվի աղաջ կըսե. - Էլիմ էն սիրուն տղեն թամաշա էնիմ, հեմ էն ի՞նչ տղա էր, էլավ քար:

Էլավ իշկեց օր օսկի բրչամ, արևու պես փելք կիտա: Ախչիկ աչք թալեց էտ տղեն:

- Ալա, - ըսեց, - էտ տղեն պիտի սաղցում:

Իրեք վարոց զարկեց՝ տղեն կանգնեցուց, էրաց մարթ:

- Հայ՛ հողածին, դու հո՞րի էկար հոդա: Հավքն ուր թևով, օցն իր պոռտով չէկեր էտ հոդա:

Ըսեց. - Քու սերն է բերեր, քու համար իմ էկե:

Ըսեց. - Տղա՛, օր դու ընձի համար ես էկե, էջի բաղչեն, որ մեկ վարթ օր սալվար է, զէտ վարթ քաղե, դիր քու ծոց: Որ մեկ ծառի ճյուղ օր կանանչ է, զէտ քաղե, դիր քու ծոց: Շուշե մի առ, մեկ օսկի ջուր լից, մեկ առծաթ, դիր քու գոտին: Գնա, ես կընկիմ քու հետև գամ: Իմ սեյրին էտ վարթն է:

Տղեն գնաց:

Սալվի աղաջու ասքար ըսեց. - Տատաշ, տատաշ զտղեն բռնա, Սալվի աղաջ բեբեց:

- Հայ, հայ, չուր իմկա տատաշ, էղեր եմ վարթ ու ռհան, թ՚ընցի էրթա Սալվի աղաջին:

Ըսեց. - Գե՛տ, գե՛տ, բռնա զէտ տղեն: Բերեց Սալվի աղաջին:

Ըսեց. - Թ՚ընցի, էրթա Սալվի աղաջին , չուր մկա արնգետ, էղեր ինք զուլալ:

Ըսեց. - Գե՛լ, գե՛լ, բռնա զէտ տղեն, բերեց սալվի աղաջին:

Ըսեց. - Չուր մկա անօթի ենք՝ կշտացանք, թ'ընցի էրթա Սալվի աղաջին:

էկավ մըտ ախչիկ, ըսեց.- Ախչի՛, ախչի՛, բռնա զէտ տղեն, բերեց Սալվի աղաջին:

Ըսեց. - Թ'ընցի էրթա, իմ մամու քուրն է Սալվի աղաջին:

Ըսեց. - Ափո՛, ափո՛, բռնա զէտ տղեն, բերեց Սալվի աղաջին:

Ըսեց. - Թ'ընցի էրթա, չուր մկա քառսուն խինգ ենք, էղանք տըսնընխինգ տարեկան:

Տղեն էկավ մըտ քուր, տեսավ օր պպռեն ախչիկ մի ուր խեչ կը վազե: Ուր սեյրին է, օր բերեց: էկավ սարի մոտ մեկնավ, ուր սիրական տեսավ:

Սալվի աղաջին ըսեց. - Թե, տղա՛, ի՞նչպես էդ ծառի թուփ կը թալես գետին, օր ծառ զանի, թուփ զանի՝ թուփ խաղա, քար զանի՝ քար խաղա:

Ըսեց. - Տղա՛, ծառի թուփ մեկ աչու թա'լ, մեկ՝ ծախու: էտ ախբուր մեկ արծաթակ աջու թալ, մեկ ծախու թալ:

Բազրկանբաշին էկավ, ծառ կը զանի, ծառ կը խաղա, թուփ կը զանի՝ թուփ կը խաղա, քար կը զանի, քար կը խաղա: Տուք օրոտուն ընկե սար ու ծոր չաղլի քրտերու ծենեն: Կը գոռա:

Տղեն բազրկանբաշին բռնեց, բերեց թաքլիֆ, ինչ խաբար է, թուր տղեն է:

էկավ տուն, ըսեց. - Հաց ու զատ էրա, սարի տղեն բերեմ տուն՝ թաքլիֆ. էս էրկու հեղ ընծի տարավ ուր տուն՝ թաքլիֆ:

Ըսավ. - Ես ամիս մի գացեր էր Սալվու աղաջու հետև, էկեր է, պտի բերեմ տուն՝ թաքլիֆ:

էտ Սալվի աղաջ զուր իրիկ կանչեց, տարավ ծառի հետև, ըսեց. - Ինչպե՞ս կէրթաս էտոր տուն՝ թաքլիֆ, քաղե դաստե մի վարթ ու ռեհան, շուշե մի լից անմախութենի ջուր, զար քու գոտին, էրթանք էտ բազրկանի տուն թաքլիֆ:

էլան գացին բազրկնի տուն: Բազրկան հառաչվեր:

Սալվի աղաջին տվին թամբիխ էրաց: Բազրկնի դռան հետև թուլըթ-լամե մի կա, չը թքուս վրեն, վարթ ու ռեհան թալ վերեն, անմախութենի ջուր թալ գոմշու տկի վրեն ու ընցի ներս:

Հաց կերան, պրծան:

Ըսեց. - Իմ դռան թուլըթլամեն մեռուկ է:

էտ տղեն ըսեց՝ սաղ է:

Ըսեց բազրկանբաշին. - Թի սաղ էղավ՝ իմ դովլաթ քզի, թի մեռուկ էղավ՝ քու դովլաթ ընծի:

Ըսեց. - էլի բեր էստեղ, էտ գոմշու կաշին բանանք, թուլըթլամեն հանենք:

Առան, էկան տուն ու ջալ քրարներ ժողվան, խանեցին գոմշու տկի միջեն: Հանեցին, գուրջի փթուկ կնիկ մի կայնուկ է էտտեղ:

Սալվի աղաջին ըսեց. - Տղա՛, էդի քու մայրն է: Օր դու թքուցեր իրես՝ կը մեռներ*: Չին առճիճ կը ծամե՞: Հիսան շան լակոտ կը բերե՞: Ըսավ. - Այդա սարի ճժեր քու ճժերն են, իդա կնիկ քու կնիկն է: Քու դովլաթ խասավ ուրենց:

Բազրկան էրկու ջահել ձի քաշեց դուս, մեկ կնկան ծամեր կապեց մեկ ձիու պոչ, մեկին կապեց մեկ ձիու պոչ:

Ըսեց. - Քառսուն տարի ձգի պահեր իմ, քառսուն տարի էլ կը պահիմ, տար սար, զմր սարեսար, զմր ձորեձոր, հիրկուն էրկուսի ծամեր տուն բերես:

Էնոնք հասան ուրենց մրազին, դուք էլ՝ ձեր:

* Տղեն օր թքուցա մամու իրես, կը մեռնի մամ (ծ.ա.):